ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

30.03.2026 թվականին կնքված N ԿԴՄՀՀ-ԲՄԱՇՁԲ-26/2-1 գնման պայմանագրի

ք. Երևան «25» 06 2026թ.

«Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն՝ Կ. Ղազարյանի, ով գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, «Արտաշատի ԷՑՇ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն՝ Ս. Արիստակեսյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, «Գնումների մասին» ՀՀ օրենսդրությամբ, հիմք ընդունելով 30.03.2026թ. կնքված N ԿԴՄՀՀ-ԲՄԱՇՁԲ-26/2-1 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 և 8.16 կետերը և հաշվի առնելով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման պահանջը, նախատեսվել է որոշակի ֆինանսավորում, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. **Համաձայնագրի առարկան**

Հետագա համագործակցության և Պայմանագրով նախատեսված աշխատանքների ձեռքբերման համար հատկացված 200000000 (երկու հարյուր միլիոն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն, շրջանակներում գնում կատարելու նպատակով Կողմերը որոշեցին.

1. Պայմանագրի Հավելված 1-ով ներկայացված Տեխնիկական բնութագիր – գնման ժամանակացույցով սահմանված «ժամկետը» շարադրել նոր խմբագրությամբ, համապատասխանաբար՝ «կողմերի միջև կնքվող համաձայնագրի հիման վրա, ինչպես նաև տեխնիկական հսկողության ծառայությունների պայմանագրի առկայության դեպքում 4-րդ ամիսը ներառյալ»:

2. Հաստատել Պայմանագրի վճարման ժամանակացույցը ըստ սույն համաձայնագրի Հավելված 1-ի:

2. **Այլ պայմաններ**

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Կողմերի պատասխանատվության հետ կապված այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի թիվ 1 հավելվածը հանդիսանում է սույն համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. **Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| **ՊԱՏՎԻՐԱՏՈՒ** | **ԿԱՊԱԼԱՌՈՒ** |
|---|---|
| «Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՓԲԸ | «Արտաշատի ԷՑՇ» ՍՊԸ |
| ՀՀ, ք. Երևան, Ծիծեռնակաբերդի զբոսայգի 1 | ՀՀ, Արարատի մարզ, գ. Ոստան, Երկաթուղային 14 |
| Բանկ՝ Ամերիաբանկ ՓԲԸ | Բանկ՝ Հայէկոնոմբանկ ԲԲԸ |
| ՀՀ՝ 1570022467400100 | ՀՀ՝ 163098321645 |
| ՀՎՀՀ՝ 00144572 | ՀՎՀՀ՝ 04201249 |
| Տնօրեն՝ ---------------- Կ. Ղազարյան | Տնօրեն՝ ---------------- Ս. Արիստակեսյան |
| /ստորագրություն/ Կ.Տ | /ստորագրություն/ Կ.Տ |

*Հավելված N 1*
*«30» մարտի 2026թ. կնքված*
*ԿԴՄՀՀ-ԲՄԱՇՁԲ-26/2-1 ծածկագրով պայմանագրի*
*«25» 06 2026թ. կնքված*
*Թիվ 1 համաձայնագիր*

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/Հ | Միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման | Աշխատանքի անվանումը | Վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ՝ ըստ ամիսների, այդ թվում* | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | I | II | III | IV | V | VI | VII | VIII | IX | X | XI | XII | Գումար (ՀՀ դրամ) |
| 1 | 45451700 | վերակառուցման (էլեկտրամատակարարման ցանցի վերակառուցման և հիմնանորոգման) աշխատանքներ | - | - | - | - | - | - | 200000000 | 200000000 | 200000000 | 200000000 | 200000000 | 200000000 | 200000000 |
| | | **ընդամենը** | | | | | | | | | | | | | 200000000 |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
«Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Ծիծեռնակաբերդի զբոսայգի 1
Բանկ՝ Ամերիաբանկ ՓԲԸ
ՀՀ՝ 1570022467400100
ՀՎՀՀ՝ 00144572
Տնօրեն՝ ———— Կ.Ղազարյան
/ստորագրություն/
Կ.Տ.

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**
«Արտաշատի ԷՑՇ» ՍՊԸ
ՀՀ, Արարատի մարզ, գ. Ոստան, Երկաթուղային 14
Բանկ՝ Հայէկոնոմբանկ ԲԲԸ
ՀՀ՝ 163098321645
ՀՎՀՀ՝ 04201249
Տնօրեն՝ ———— Ս. Արիստակեսյան
/ստորագրություն/
Կ.Տ.